

Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան

Անառակի Կիրակի

- 1) Անառակի որդիին
առակէն բղխող չորս պատգամներ - - - - - 2
- 2) Ի՞նչ է ապացոյցը որ անձի մը
ապաշխարութիւնը իրական է - - - - - 8
- 3) Հօր Աստուծոյ սէրը
մեղաւոր մարդուն հանդէպ - - - - - 14
- 4) Լաւագոյն պատմուճանը,
մատանին եւ կօշիկը - - - - - 20
- 5) Անառակ որդիին հեռացումն
ու վերադարձը իր ազատ կամքով - - - - - 24

Անառակ որդիին առակէն բղխող չորս պատգամներ

Անառակի որդիին առակէն բղխող պատգամները շատ են: Այս յօդուածին մէջ կը յիշեմ միայն չորսը.-

1) Անառակ որդիին համար կ'ըսուի, որ մսխեց իր ամբողջ հարստութիւնը, երբ հօրմէն հեռանալով՝ հեռու երկիր մը գնաց (Ղկ 15.13-14): Հոսկէ կը ստրվինք, թէ ով որ կը հեռանայ Աստուծմէ՝ կը կորսնցնէ իր ամբողջ հարստութիւնը: Ի՞նչ են այն հարստութիւնները զորս կրնանք կորսնցնել եթէ երբեք հեռանանք Աստուծմէ.

Այդ հարստութիւնը Աստուծոյ ներկայութեան մէջ գտնուող ուրախութիւնն ու խաղաղութիւնն է: Մարդ կը կորսնցնէ իր սրտի ուրախութիւնն ու հոգիի խաղաղութիւնը եթէ երբեք հեռանայ Տիրոջմէ:

Այդ հարստութիւնը Աստուծոյ եւ մարդուն միջեւ գոյութիւն ունեցող հայր եւ զաւակի սիրալիր յարաբերութիւնն է: Այս յարաբերութիւնը կը դադրի եթէ մարդ հեռանայ իր երկնաւոր Հօրմէն:

Այդ հարստութիւնը Աստուծոյ կողմէ մեզի տրուած շնորհքները, պարգեւներն ու կարողութիւններն են: Կը կորսնցնենք այս բոլորը եթէ հեռանանք անոնց Տուիչէն:

Այդ հարստութիւնը Աստուծոյ կողմէ մարդուն հոգիին մէջ դրուած հաւա տքն է, մարդուն սրտին մէջ դրուած սէ ըն է, մարդուն էութեան մէջ դրուած յո՛յսն է: Մեր մէջ հաւատքի կրակը կը շիջի, սիրոյ աղբիւրը կը ցամքի եւ յոյսի ծաղիկը կը թօշնի, եթէ երբեք հեռանանք անոնց Պարգեւիչէն:

Այդ հարստութիւնը Աստուծոյ կողմէ մեր մէջ դրուած բարի կամքն է, մեր նմանը սիրելու կարողութիւնն է, աղօթքի կանգնելու փափաքն է, չքաւորին օգնելու եռանդն է, սկարին զօրակցելու ցանկութիւնն է, թշուառին կարեկցելու պատրաստակամութիւնն է: Այս բաները կատարելու փափաքը կը մեռնի մեր մէջ, եթէ երբեք հեռանանք Աստուծմէ:

Այդ հարստութիւնը Աստուծոյ կողմէ մեր մէջ դրուած ու աճեցուած առաքինութիւններն են, որոնցմէ կը մերկանանք՝ եթէ հեռանանք Սուրբ Հոգիէն:

Այդ հարստութիւնը յաւիտենական փրկութիւնն ու կեանքն է, Աստուծոյ կողմէ մեզի շնորհուած ապահովութեան զգացումըն է, հոգեկան հանգիստն ու միտքի անդորրութիւնն է: Այս բոլորը կը կորսնցնենք եթէ հեռանանք Տէր Յիսուսէն:

Այդ հարստութիւնը մեր անկեղծ ընկերներն ու բարեկամներն են, մեր մտերիմներն ու հարազատներն են, մեր հաւատարիմ գործակիցներն ու դրացիներն են, զորս կը կորսնցնենք եթէ երբեք հեռանանք մարդս մարդուն մօտեցնող Արարիչէն:

Այդ հարստութիւնը Տիրոջ ընկերակցութիւնն է, մեզի շնորհած անոր պաշտպանութիւնն ու առաջնորդութիւնն է: Կը կորսնցնենք ասոնք՝ եթէ կորսնցնենք Տէրը:

Եւ տակաւին, եթէ մեր նմանին ողորմելու փափաք ունինք՝ ատիկա կը մեռնի մեր մէջ եթէ հեռանանք Ողորմածէն: Եթէ բարին գործելու ցանկութիւն ունինք՝ ատիկա կը շիջի մեր մէջ եթէ լքենք բարի ցանկութեանց Պարգեւիչը: Եթէ ժուժկալ ըլլալու զօրութիւնը ունինք՝ ատկէ կը դատարկուինք եթէ հեռանանք ամէն զօրութիւն Շնորհողէն:

Վերջապէս, եթէ հեռանանք Աստուծմէ, կը կորսնցնենք աստուածային այն գորովն ու սէրը, այն քաղցրութիւնն ու գուրգուրանքը, որով ան կը լեցնէ ու կը պարուրէ մեզ. իսկ երբ կորսնցնենք այս բոլորը՝ կը մատնուինք հոգեւոր սովի:

2) Ամէն բան կորսնցնելէ ետք, անառակ որդին մեծ սովի մը մատնուեցաւ (Ղկ 15.14): Հոսկէ կը սորվինք, թէ ան որ կը հեռանայ Աստուծմէ՝ սովը կու գայ իր տիրապետութիւնը հաստատելու անոր կեանքին մէջ: Բնագիրին մէջ ալ ունինք «տիրեց» բառը: Արդարեւ, երբ հոգին հեռանայ իր Ստեղծիչէն՝ ահալի սովի կը մատնուի: Երբ սիրտը հեռանայ իր Բնակիչէն՝ ունայնութեան կը մատնուի: Երբ միտքը հեռանայ իր Կազմիչէն՝ կը դառնայ անյստակատես եւ մշուշալից: Երբ կեանքը հեռանայ իր Պարգեւիչէն՝ կը դառնայ մեռելութիւն:

Քրիստոս ի՛նքն է տիեզերքն ու մեզ լեցնողը: Եթէ հեռանանք իրմէ՝ դատարկ կը զգանք, իսկ դատարկութիւնը հալուամաշ ընող սով կը բերէ հետը:

Քրիստոս ի՛նքն է հիմնադիրը մեր հաւատքին: Եթէ հեռանանք իրմէ՝ հաւատքի սով կ'ապրինք:

Քրիստոս ի՛նքն է մեր փրկութեան յոյսը: Եթէ հեռանանք իրմէ՝ յոյսի սով կ'ապրինք:

Քրիստոս ի՛նքն է բարին ու մեր բարերարը: Եթէ հեռանանք իրմէ՝ բարի հոգիի մը սովը կ'ապրինք:

Քրիստոս ի՛նքն է մեր զօրութիւնը: Եթէ հեռանանք իրմէ՝ զօրութեան սով կ'ապրինք:

Քրիստոս ի՛նքն է մեր կեանքի Հացը: Եթէ հեռանանք իրմէ՝ մեր հոգիները սովահար կը դառնան:

Քրիստոս ի՛նքն է մեր սրտի ծարաւը յագեցնող Գետը: Եթէ հեռանանք իրմէ՝ մեր սիրտերը ծարաւահար կը դառնան:

3) Մեղքը կը դժբախտացնէ մարդ արարածը: Որպէսզի ասիկա գիտնանք, կը բաւէ որ նկատի առնենք այն իրավիճակը որուն մատնուեցաւ կրտսեր որդին իր հօրմէն հեռանալէ ետք.

ա) Երբ լքեց իր հայրը, օտարի մը ձեռքին տակ ծառայ եղաւ (Ղկ 15.15): Երբ լքենք զԱստուած՝ Սասանային ձեռքին տակ ծառայ կ'ըլլանք:

բ) Երբ լքեց իր հօրենական տունը, անոր փոխարէն խոզանոց մը տրուեցաւ իրեն իբրեւ բնակատեղի: Երբ հրաժարինք երկինքի մէջ տուն ունենալու փափաքէն՝ ազարակաբընակ կը դառնանք, այսինքն՝ անասունի նման կ'ապրինք (համեմատէ՝ Ժդ 3.18-19): Անասո՛ւնը միայն այս կեանքին համար կ'ապրի, եւ երկինքի մէջ տուն ունենալու յոյսը չունի:

գ) Երբ լքեց իր հօր ու անոր ծառաներուն ընկերակցութիւնը, միակ ընկերակցութիւնը որ կրցաւ ունենալ՝ խոզերուն ընկերակցութիւնն էր: Երբ լքենք Աստուծոյ եւ անոր սուրբերուն ու արդարներուն ընկերակցութիւնը՝ միակ ընկերակցութիւնը որ պիտի ունենանք՝ չար ոգիներուն ընկերակցութիւնն է:

դ) Երբ լքեց իր հօրը տան մէջ իր ունեցած դիրքն ու պաշտօնը, իբրեւ նոր դիրք ու պաշտօն՝ խոզարածութեան պաշտօն յանձնուեցաւ իրեն: Երբ լքենք Աստուծոյ կողմէ մեզի տրուած դիրքը՝ եւ չուզենք կատարել անոր կողմէ մեզի վստահուած գործը՝ կը դառնանք խոզարածներ, այսինքն՝ մեղքի սնուցիչներ ու տարածիչներ:

ե) Երբ լքեց իր հօրենական տան համադամ կերակուրները, անոնց փոխարեն խոզերու կերած եղջիրներէն տրուեցաւ իրեն: Երբ լքենք կեանքի հացը՝ Քրիստոսը, անոր փոխարեն խոզի եղջիր կը տրուի մեզի, այսինքն՝ Մատանային ու անոր չար ոգիներուն կերակուրները՝ սուտը, շնութիւնը, դառնութիւնը, ատելութիւնը, չարախօսութիւնը. ասոնք կը դառնան կերակուրները ոեւէ անձի որ չ'ուզեր ճաշակել կենաց հացէն՝ Քրիստոսէն:

զ) Երբ լքեց իր հայրը՝ սկսաւ անառակ կեանք մը ապրիլ: Երբ լքենք զԱստուած՝ անառակութիւնը կը դառնայ իշխող մեր կեանքին մէջ: Մարդ չի կրնար մաքուր մնալ երբ հեռանայ Մաքրողէն:

է) Երբ լքեց իր հայրը՝ կորսնցուց ամէն բան: ԶԱստուած լքող մարդը՝ կը կորսնցնէ ամէն բան, կը կորսնցնէ իր ներկայ ու յաւիտենական կեանքը:

ը) Երբ լքեց իր հայրը՝ աղքատացաւ: ԶԱստուած լքող մարդը՝ կ'աղքատանայ: Կ'աղքատանայ հոգեպէս, որովհետեւ կը կորսնցնէ ամէն զօրութիւն: Կ'աղքատանայ սրտապէս, որովհետեւ կը կորսնցնէ ամէն առաքինութիւն: Կ'աղքատանայ մտապէս, որովհետեւ կը կորսնցնէ ամէն յստակատեսութիւն:

թ) Երբ լքեց իր հայրը՝ մատնուեցաւ սովի: Երբ լքենք զԱստուած՝ հոգիի սովը կը դառնայ բաժինը մեր կեանքին:

4) Անառակ որդին *«նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիրներէն իր փորը լեցնելու»* (Ղկ 15.16): Մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք «եղջիր» բառին վրայ: Մենք գիտենք որ եղջիրին մէջ դատարկ կ'ըլլայ: Եղջիր ուտելը՝ դատարկ բան ուտել կը նշանակէ: Այստեղ մեզի ըսել ուզուածը այն է, թէ աշխարհ ինչ որ տայ մեզի՝ դատարկ ու

անամէջ է: Աշխարհ լեցուն բան չի կրնար տալ մեզի, եւ ուստի՝ չի կրնար լեցնել մեր սիրտը, չի կրնար կշտացրնել մեր հոգին: Դատարկ բանը՝ չի կրնար լեցնել դատարկութիւնը մեր հոգիին:

Եթէ չանդրադառնանք այս իրողութեան, չենք կրնար անառակ որդիին նման լքել խոզանոցն ու անոր եղջիրները, եւ դառնալ երկնքին ու անոր կենաց Հացին:

Ի՞նչ է ապացոյցը որ անձի մը ապաշխարութիւնը իրական է

*«Հա՛յր, մեղանշեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժա-
նի չեմ քու որդիդ կոչուելու. զիս քու գործաւորներէդ մէկը
նկատէ» (Ղկ 15.18-19):*

Այս բառերը կը պարզեն կրտսեր որդիին զոջումին եւ խոստովանութեան անկեղծութիւնը: Բառեր, որոնք ցոյց կու տան թէ անոր ապաշխարութիւնը իրական էր: Ապացոյցը որ անձի մը ապաշխարութիւնը իրական է՝ մեղքերու իր խոստովանութիւնն է: Առանց մեղքերու խոստովանութեան՝ չկա՛յ ճշմարիտ ապաշխարութիւն, եւ առանց ճշմարիտ ապաշխարութեան՝ մեղքերու խոստովանութիւնը արժէք չունի:

Ճշմարի՛տ էր ապաշխարութիւնը կրտսեր որդիին, որովհետեւ,

ա) Խոստովանեցաւ որ Աստուած հայր է:

բ) Խոստովանեցաւ իր մեղաւորութիւնը:

գ) Խոստովանեցաւ որ ինք մեղանշած է Աստուծոյ հայրութեան դէմ:

դ) Խոստովանեցաւ իր անարժանաւորութիւնը:

ե) Խոստովանեցաւ որ ինք արժանի չէ Աստուծոյ որդին կոչուելու:

զ) Խոստովանեցաւ որ ինք Աստուծոյ մօտ լոկ ծառայի դիրք ունենալու արժանի է:

Ուեւ անձ որ ճշմարտապէս կ'ապաշխարէ՝ պարտի նոյն այս վեց խոստովանութիւնները կատարել, այլապէս՝ կաս-

կածի տակ կ'առնուի իր ապաշխարութեան անկեղծութիւնը:

Եկէք ամփոփ կերպով խօսինք յիշեալ վեց կէտերուն մասին.-

1) «Հա՛յր»: Կրտսեր որդին խոստովանեցաւ որ Աստուած հայր է: Ուէէ անձ որ կ'ապրի ճշմարիտ ապաշխարութիւն մը, առաջին բանը որուն կ'անդրադառնայ այն է, որ Աստուած հա՛յր է: Հրեային համար՝ Աստուած լոկ ստեղծիչ ու նախանձոտ Աստուած է: Իսլամին համար Աստուած լոկ ամենակալ ու ամենակարող Աստուած է: Չինացիին համար Աստուած անձանօթ ուժն է: Հնդիկին համար Աստուած անտեսանելի զօրութիւնն է: Իսկ ճշմարտապէս ապաշխարութիւն ապրած եւ ճշմարիտ հաւատացեալ դարձած մարդուն համար՝ Աստուած հա՛յր է, գուրգուրալի՛ց հայր է, գորովալի՛ց հայր է, քաղցր ու գթառատ հա՛յր է, սիրտ ու իր սրտին մէջ սէր ունեցող հայր է: Միբեղի՛ ընթերցող, ո՞վ է Աստուած քեզի համար: Լոկ արարի՛չ, թէ նաեւ սիրով լեցուն հայրական սիրտ մը: Լոկ բժի՛շկ մը, որուն կրնաս դիմել ամէն անգամ երբ ցաւ ու հիւանդութիւն ունենաս, թէ նաեւ հայր մը՝ որուն կրնաս դիմել ամէն անգամ երբ գուրգուրանքի կարիքը զգաս: Լոկ ազատարա՛ր մը, որուն կրնաս օգնութեան կանչել ամէն անգամ երբ փորձութեան ու նեղութեան մէջ իյնաս, թէ նաեւ հայր մը՝ որուն կը դիմես, անոր հետ հաղորդակցութեան սիրալիր պահ մը ունենալու համար: Եթէ դուն հայր ես, պիտի ուզէի՞ր եւ պիտի ընդունէի՞ր, որ զաւակդ քեզի դիմէր միայն երբ նեղութեան մէջ իյնար: Միայն նեղութեան ատեն իր հօրը դիմող զաւակ մը՝ հարազատ զաւակ չի համարուիր:

2) «Մեղանչեցի»: Այս բառով անառակ որդին խոստովանեցաւ եւ միաժամանակ յայտարարեց իր մեղաւորութիւնը: Ան սորվեցուց մեզի, թէ անոնք որոնք Աստուծոյ դիմաց կը կանգնին, պէտք է իրենց մեղաւորութիւնը խոստովանին եւ յայտարարեն: Իսկ որպէսզի կարենանք մեր մեղաւորութիւնը խոստովանիլ՝

ա) Պէտք է խոնարհ ըլլալ: Հպարտ մարդը չի կրնար իր մեղքերը խոստովանիլ, որովհետեւ չի տեսներ իր մեղքերը եւ չ'ընդունիր իր մեղաւորութիւնը: Ասոր ամենէն գեղեցիկ վկայութիւնը Փարիսեցիին եւ Մաքսաւորին առակին մեջ յիշուած Փարիսեցիին օրինակն է: Ան չկրցաւ խոստովանիլ իր մեղքերը, որովհետեւ հոգեւորապէս կոյր ու հպարտ էր, եւ ուստի՝ անկարող էր տեսնելու իր մեղքերը. եւ բան մը որ չէր տեսներ՝ ինչպէս կրնար ընդունիլ անոր գոյութիւնը եւ խոստովանիլ զանիկա: Ասոր հակառակ, կը տեսնենք թէ ինչպէս Մաքսաւորը խոնարհեցաւ Աստուծոյ ներկայութեան դիմաց եւ խոստովանեցաւ իր մեղաւոր ըլլալը եւ խնդրեց որ Աստուած ներէ իր մեղքերը, եւ Աստուած ներեց (Ղկ 18.11-14):

բ) Պէտք է քաջ ըլլալ: Քաջութիւն կը պահանջէ յայտարարել թէ մենք մեղաւոր ենք: Տկար մարդն է որ կ'ուրանայ ինքնիր տկարութիւնները, մինչդեռ քաջ մարդը կը տեսնէ իր տկարութիւնները, իր խոցելի կէտերը, իր խեղճութիւնները, եւ Տիրոջ կը դիմէ ու անոնցմէ ազատագրուիլ կը խնդրէ: Անառակ որդին երբ խոստովանեցաւ իր մեղաւորութիւնը՝ ազատեցաւ իր մեղքերէն: Իր մեղքերէն ազատիլ ուզող մարդը՝ զանոնք իր Ազատարարին թող յանձնէ:

3) «Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ»: Անառակ որդին ոչ միայն խոստովանեցաւ որ ինք մեղանչած է

Աստուծոյ դէմ, այլեւ՝ խոստովանեցաւ թէ մեղանշած է անոր հայրութեան դէմ: Արդարեւ, «հայր» եւ «Աստուած» բառերուն գործածութեամբ, եւ իր մեղաւոր ըլլալը ծանուցելով, անառակ որդին ցոյց տուաւ մեզի, թէ ամէն մէկ մեղք որ կը գործենք՝ Աստուծոյ եւ Աստուծոյ հայրութեան դէմ է որ կը գործենք:

Աստուծոյ դէմ մեղք գործելը սարսափելի բան է, որովհետեւ անոր արարիչ ըլլալը ուրանալ կը նշանակէ, բայց նոյնքան սարսափելի բան է անոր հայրութեան դէմ մեղք գործելը, որովհետեւ այս անգամ անոր սէրը ուրանալ կը նշանակէ, սիրով լեցուն անոր հայրական սիրտը տրտմեցրնել կը նշանակէ: Իսկ ո՞վ է Աստուծոյ հայրութեան դէմ մեղք գործող մարդը, եթէ ոչ ան՝ որ կ'ատէ իր նմանը: Մեր նմանը ատելը՝ Աստուծոյ հայրական սէրը ուրանալ է: Մէկը չի կրնար ճանչնալ Աստուծոյ հայրական սէրը եւ անգութ ըլլալ իր նմանին հանդէպ:

«Հայր» եւ «Աստուած» բառերուն գործածութեամբ, անառակ որդին սորվեցուց մեզի, որ Աստուած ո՛չ միայն Աստուած է, ո՛չ միայն Արարիչ է, ո՛չ միայն Տէր ու Թագաւոր է, այլ նաեւ հայր է, գուրգուրալի՛ց հայր է, մեզ սիրող ու մեր սէրը փնտռող հայր է, մեզ կարօտցող ու մեր կարօտը գոհացնող հայր է: Ուստի, անառակ որդիին քայլերուն հետեւինք եւ դառնանք Աստուծոյ: Դառնանք ո՛չ միայն որովհետեւ մեր Աստուածն ու դատաւորն է, այլ որովհետեւ մեր պաշտպան հայրն է:

4) «Արժանի չեմ»: Այս բառով կրտսեր որդին իր անարժան ըլլալը խոստովանեցաւ. եւ այս ընելով, ան սորվեցուց մեզի, թէ երբ Աստուծոյ ներկայութեան կը կանգնինք՝ պէտք է խոնարհութիւնը ունենանք մեր անարժան ըլլալը ծանու-

ցելու: Ան որ կ'անդրադառնայ Աստուծոյ մեծութեան՝ չի կրնար իր փոքրութիւնը շխտատովանիլ: Երբ մէկը ինքզինք պատիւի արժանի կը նկատէ, կը մոռնայ որ միայն Աստուած պատիւի արժանի է:

Ուեւ անձ որ ինքզինք արժէք կը նկատէ՝ Աստուծոյ մօտ կը կորսնցնէ իր արժէքը: Ուեւ անձ որ ինքզինք երկինքի արքայութեան արժանի կը նկատէ՝ կը կորսնցնէ զանիկա: Հարկաւ ըսել չեմ ուզեր թէ մարդը արժէք չունի: Մարդը արժէք է, այո՛, բայց մարդը չէ որ ինքզինք արժէք պէտք է նկատէ, այլ՝ Աստուած ինք: Իսկ Աստուած ե՞րբ է որ արժէք կը նկատէ մարդը կամ ե՞րբ է որ մարդը արժէք կը դառնայ Աստուծոյ հայեացքով: Մարդը արժէք կը դառնայ Աստուծոյ համար՝ երբ դառնայ Քրիստոսի, յանձնուի Քրիստոսի, անոր արիւնով սրբուի եւ անոր ծառան ըլլայ:

Միրելիներ, մենք եւս պէտք է անառակ որդիին նման «արժանի չեմ» ըսել սորվինք: Ինքզինք արժանաւոր անձ նկատող մարդը չի կրնար «արժանի չեմ» ըսել: «Արժանի չեմ» կրնան ըսել միայն անոնք՝ որոնք կ'անդրադառնան իրենց փոքրութեան, ոչնչութեան ու խեղճութեան: Ան որ չ'անդրադառնար որ միայն Աստուած է արժէքն ու արժէք տուողը՝ չի կրնար ըսել «արժանի չեմ»:

5) *«Արժանի չեմ քու որդիդ կոչուելու»*: Այս բառերով, անառակ որդին սորվեցուց մեզի, ո՛չ միայն խոստովանելու որ մենք արժանիք ունեցող մէկը չենք, այլեւ՝ խոստովանելու որ մենք նոյնիսկ արժանի չենք Աստուծոյ զաւակներ կոչուելու: Մէկը որ իր մեղքերով վիրաւորած է իր Արարիչը՝ ի՞նչ պէս կրնայ անոր հարազատ զաւակը ըլլալ: Եթէ Աստուած մեզ իր զաւակները կը կոչէ՝ կը կոչէ ո՛չ թէ որովհետեւ արժանի ենք իր զաւակները ըլլալու, այլ որովհետեւ ի՛նք

շնորհաբաշխ ու ողորմած է: Աստուծոյ զաւակ կոչուիլը կամ ըլլալը՝ Աստուծոյ շնորհքին ու ողորմութեան արդիւնքն է եւ ո՛չ թէ արդիւնքը մեր արժանաւորութեան, բարութեան կամ մաքրութեան: Ճիշդ է որ մենք պէտք է ընդունինք, թէ մենք արժանի չենք Աստուծոյ զաւակները կոչուելու, միւս կողմէ սակայն, եթէ հաւատքով դիմենք Աստուծոյ եւ ան մեզ որդեգրէ՝ պէտք չէ ուրանանք որ մենք Աստուծոյ զաւակներն ենք: Ուրիշ բան է ընդունիլ որ մենք հաւատքով Աստուծոյ զաւակ դարձած ենք, եւ ուրիշ բան՝ յայտարարել թէ մենք արժանի ենք Աստուծոյ զաւակները կոչուելու:

6) *«Ձիս քու գործաւորներէդ մէկը նկատէ»*: Անառակ որդին խոստովանեցաւ որ ինք իր հօրը մօտ լոկ ծառայի դիրք ունենալու արժանի էր: Հոսկէ կը սորվինք, թէ մեղաւոր մարդը երբ դարձի գայ՝ հազիւ Աստուծոյ գործաւորը կրնայ ըլլալ: Եթէ երբեք Քրիստոս մեզ իր բարեկամները կը կոչէ ու կը նկատէ (Յհ 15.14-15), կը կոչէ ու կը նկատէ ո՛չ թէ որովհետեւ մե՛նք արժանի ենք իր բարեկամները ըլլալու, այլ որովհետեւ ի՛նք կ'ուզէ մեզ իբր այդպիսին ընդունիլ:

Հօր Աստուծոյ սէրը մեղաւորին հանդէպ

Մեկնիչ հայրեր անառակ որդիին առակը կոչած են՝ *«Աւետարան մը՝ Աւետարաններուն մէջ»*: Ուրիշներ զայն կոչած են՝ *«Փոքրիկ Աւետարան»*: «Աւետարան» կը նշանակէ՝ աւետիս, ուրախ լուր: Արդարեւ, Աւետարան մըն է անառակ որդիին առակը, որովհետեւ հոն կը կարդանք թէ ինչպէս Աստուած մեծ ուրախութեամբ կը ներէ զօջացեալ մարդուն, առանց պայմանի կը քաւէ դարձ ապրողը, եւ առանց անկէ հաշիւ պահանջելու՝ անոր հաշիւը փակուած կը յայտարարէ: Եւ ճիշդ ասոր համար ալ, բոլոր սերունդներու մարդիկը սիրած են այս առակը, եւ անթիւ մարդիկ անկէ քաջալերուած դարձի եկած ու երկնաւոր Հօր յանձնուած են: Ես պիտի ուզէի առակը կոչել՝ *«Միբով բաբախող Հօր Աստուծոյ սիրտը»*, եւ կամ՝ *«Հօր Աստուծոյ սէրը՝ մեղաւորին հանդէպ»*:

Այս առակը մարդուն սրտին ամենէն շատ խօսող առակն է, որովհետեւ ամէն մարդ ինքզինք կը տեսնէ անառակ որդիին անձին մէջ, եւ միաժամանակ կը տեսնէ այն անչափ սէրը որ անոր հայրը ցոյց կու տայ իրեն հանդէպ, եւ ամէն անձ վստահաբար կ'անդրադառնայ որ անառակին հայրը կը ներկայացնէ մեր երկնաւոր Հայրը՝ որուն սիրոյն այնքան կարիքը ունինք: Այո, կը սիրենք այս առակը, որովհետեւ անոր մէջ կը տեսնենք մեր երկնաւոր Հօր մեծ սէրը մեղաւորներու հանդէպ, մեծ գուրգուրանքը՝ գուրգուրանքի կարիքը ունեցողներու հանդէպ, գթառատութիւնը՝ գութ ու գթացող փնտրողներու հանդէպ:

Մեր երկնաւոր Հօր սէրը մեղաւորին հանդէպ ցոլացնող համարը հետեւեալն է. *«Տակաւին տունէն քաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վազելով դիմաւորեց զայն, վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց»* (Ղկ 15.20): Կարեւոր նշումներ.-

1) Կը հաստատուի թէ կրտսեր որդին *«տակաւին տունէն քաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք»*: Հայրը չտեսաւ իր որդին անոր մօտենալէն ետք, այլ զայն տեսաւ երբ անիկա *«տակաւին տունէն քաւական հեռու էր»*: Սիրելիներ, մեր երկնաւոր Հայրը մեզ կը տեսնէ՝ երբ տակաւին իրմէ հեռու ենք, երբ տակաւին չենք մօտեցած իրեն: Ան կը տեսնէ իրեն երկարած մեր հաշտութեան ձեռքը՝ երբ տակաւին չենք երկարած մեր ձեռքը իրեն: Կը տեսնէ մեր սրտին բացուիլը իր առջեւ՝ երբ տակաւին չենք բացած մեր սիրտը իր առջեւ:

Անառակ որդին *«տունէն քաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք»*: Հայրը կը տեսնէ մեզ որքան ալ մեր մեղքերով հեռացած ըլլանք իրմէ: Կը տեսնէ մեզ որքան ալ հեռացած ըլլանք իր տունէն՝ եկեղեցիէն, ու իր խօսքէն՝ Աստուածաշունչէն: Հայրը չի մոռնար մեզ երբ մենք զինք մոռցած ըլլանք: Անառակին հայրը երբեք զինք չէր մոռցած՝ երբ անառակը իր վայելքի տարիներուն մոռցած էր իր հայրը: Ինչպէս անառակին հայրը չէր մոռցած իր որդին եւ կը սպասէր անոր տուն դարձին, նոյնպէս ալ, մեր երկնաւոր Հայրը չի մոռնար մեզ որքան ալ հեռացած ըլլանք իրմէ մեր գործած անօրէնութիւններուն պատճառով, այլ կը սպասէ որ դառնանք իրեն:

2) *«Տեսաւ զինք»*: Այո՛, հայրը տեսաւ զինք: Ի՞նչ տեսաւ: Տեսաւ անոր ապաշխարութեան անկեղծութիւնը: Տեսաւ

անոր սրտի զոջումը: Տեսաւ իր մեղքերէն սրբուիլ ուզող անոր հոգին: Տեսաւ անոր վիրաւոր ու բժշկութիւն փնտռող սիրտը: Տեսաւ անոր տկարութիւնները եւ անոնցմէ ձերբազատուելու անոր փափաքը: Տակաւին, հայրը տեսաւ անոր սիրոյն վերարթնալը իրեն հանդէպ: Տեսաւ անոր կարօտի զգացումը իր տան հանդէպ: Տեսաւ սիրոյ, գորովի, գթութեան ու կարեկցութեան կարիքը ունեցող անոր սիրտը:

«Տեսաւ» բառը, հետեւաբար, կը պարզէ որ մեր երկնաւոր Հայրը տեսնող աչք ունի: Ան ամէն բան կը տեսնէ, եւ ուստի՝ ամէն բան գիտէ: Կը տեսնէ մեր սրտի տրտմութիւնը, մեր հոգիի կոտրածութիւնը, մեր միտքի խռովութիւնը, եւ կու գայ բուժելու մեզ: Կը տեսնէ մեր ցաւը, մեր վիշտը, մեր նեղութիւնն ու տառապանքը, եւ կու գայ մխիթարելու ու քաջալերելու մեզ: Կը տեսնէ մեղքին դէմ մեր մղած պայքարը, եւ այդ պայքարի ընթացքին մեր տապալումներն ու միաժամանակ մեր ձեռք ձգած յաջողութիւնները: Կը տեսնէ մեր մղած հոգեւոր պատերազմը, եւ այդ պատերազմի ընթացքին մեր յառաջխաղացքը, ինչպէս նաեւ մեր ընկրկումները:

3) «Տեսաւ զինք ու գթաց»: Անառակ որդիին հայրը ո՛չ միայն տեսաւ իր որդին, այլեւ՝ գթաց անոր: Եթէ երբեք «տեսաւ» բառը ցոյց կու տայ որ Աստուած տեսնող աչք ունի, ապա «գթաց» բառը կը պարզէ որ անիկա գթացող սիրտ ունի: Որքան կարեւոր է տեսնող աչք ունենալը, նոյնքան ալ կարեւոր է գթացող սիրտ ունենալը: Մարդիկ կրնան տեսնել մեր ցաւը, բայց գթացող սիրտ չունենալ: Կրնան տեսնել մեր կարիքը, բայց օգնութեան ձեռք չերկարել: Որքա՛ն յաճախ լռելեայն կերպով մտածած պէտք է ըլլանք. «Գթացող մը

փնտռեցի, բայց չկար: Միսիթարիչ մը փնտռեցի, բայց չգտայ»
(Սղ 69.20):

4) «*Վազելով դիմաւորեց զայն*»: Հայրը ծառայ մը չորկեց իր որդին դիմաւորելու, այլ ինք անձամբ գնաց: Եւ սա ցոյց կու տայ, թէ երբ մէկը ապաշխարութեամբ դարձի կու գայ, մեր երկնաւոր Հայրը ինք անձնապէս զինք կ'ընդունի ու կ'որդեգրէ, եւ կ'ուրախանայ իրեն համար ու իրմով: Երբ Ադամ մեղանչեց, Աստուած անձնապէս զինք փնտռեց: Երբ աւազակները վիրաւորեցին մարդը եւ զինք կիսամահ ձգեցին ու գացին, Բարի Սամարացին՝ Յիսուս ինք անձնապէս գնաց զինք գտաւ ու բժշկեց (Ղկ 10.33-35): Երբ ոչխարը հեռացաւ երամեն՝ Բարի Հովիւը անձնապէս գնաց զինք գտաւ ու վերադարձուց (Ղկ 15.4-7): Երբ Աստուած ուզեց մարդը փրկել՝ ինք անձնապէս աշխարհ եկաւ. չորկեց քերովք մը որպէսզի մեռներ մեր փրկութեան համար: Ասիկա ցոյց կու տայ, թէ Աստուած ոչ միայն մեզ կը սիրէ, այլ նաեւ կը պատուէ: Արդարեւ, Աստուծոյ անձնապէս գալը մարդուն մօտ՝ պատիւ մըն է մարդուն համար:

5) «*Վազելով դիմաւորեց զայն*»: Անառակ որդիին հայրը նստելով չդիմաւորեց իր որդին, ո՛չ ալ քալելով գնաց անոր մօտ. այլ, վազելով դիմաւորեց զայն: Ի՞նչ ցոյց կու տայ կամ կը պարզէ «վազել» բառը.-

ա) Կը պարզէ այն մեծ ուրախութիւնը զոր մեր երկնաւոր Հայրը կ'ապրի երբ մէկը կ'ապաշխարէ եւ փրկութիւնը կ'ընդունի: Մենք կ'ուրախանա՞նք երբ մարդիկ դարձի կու գան եւ փրկութիւնը կ'ընդունին:

բ) Կը պարզէ մեր երկնաւոր Հօր պատրաստակամութիւնը փրկելու ոեւէ անձ՝ որ փրկութիւն կը հայցէ: Աստուած պատրաստ է վազելու մեր փրկութեան համար, եթէ երբեք

մենք պատրաստ ենք ընդգրկելու փրկութիւնը: Մենք պատրաստ ու պատրաստակա մ ենք վազելու մարդոց փրկութեան համար:

զ) Կը պարզէ մեր երկնաւոր Հօր կարողութիւնը փրկելու մեզ: Աստուած ամենակարող է. կը վազէ մեր փրկութեան համար ու չի յոգնիր: Միայն կարողները կրնան վազել ու չյոգնիլ: Մենք կրնանք վազել, այլ խօսքով՝ աշխատիլ մարդոց փրկութեան համար ու չյոգնիլ:

դ) Տակաւին, վազելը կը պարզէ մեր երկնաւոր Հօր կարօտի զգացումը դարձի եկող մեղաւորին հանդէպ: Աստուած կը կարօտնայ իրմէ հեռու եղող մարդուն, ճիշդ ինչպէս ծնող մը պիտի կարօտնար իրմէ հեռու եղող իր զակին:

ե) Կը պարզէ մեր երկնաւոր Հօր սերը մարդուն հանդէպ: Մերը կը ստիպէ զԱստուած վազելու մեր փրկութեան համար: Աստուած սիրեց եւ անոր համար ալ վազեց մեր փրկութեան համար: Անոնք որոնք կը սիրեն՝ չեն կրնար ծալապատիկ նստիլ եւ ոչինչ ընել մարդոց փրկութեան համար: Կարելոր է միշտ յիշել, որ Աստուծոյ մեծութիւնը իր զօրութեան կամ կարողութեան մէջ չի կայանար, այլ իր սիրոյն մէջ: Մեր ալ մեծութիւնը մեր սիրոյն մէջ կը կայանայ, եւ ո՛չ թէ մեր զօրութեան մէջ, մեր դիրքին մէջ, մեր հանգամանքին մէջ:

6) *«Վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց»*: Անառակ որդին խոզանոցէն եկած էր, եւ դուք գիտէք թէ խոզանոցի մէջ քնացող մը եւ խոզերուն կերած եղջիւրներէն ուտող մը որքան կրնայ զարշահոտիլ: Հայրը սակայն չգարշեցաւ իր կրտսեր որդիէն, այլ *«Վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց»*: Հոսկէ կը սորվինք, թէ որքան ալ մեղքով զարշահոտած ըլլանք, մեր երկնաւոր Հայրը չի գանիր մեզմէ: Մենք կրնանք

Հփաթթուիլ եւ չհամբուրել մէկը որ թարախոտած է, բայց Աստուած սիրով կը փաթթուի ու կը համբուրէ մեղքի թարախով ծածկուած մարդը, որ կ'ուզէ ազատիլ մեղքի թարախէն: Աստուած իր Որդիին շնորհքի բալասանով կը մաքրէ ու կը փարատէ անոր թարախը:

Լաւազոյն պատմութեանը, մատանին եւ կօշիկը

«Հայրը իր ծառաներուն հրամայեց.- "Անմիջապէս բերէք լաւազոյն պատմութեանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն"» (Ղկ 15.22):

Անտակ որդիին առակը կը պարզէ, թէ ինչպէս երբ մէկը դարձի գայ Աստուծոյ՝ Աստուած անոր կը շնորհէ՝ Լաւազոյն պատմութեան, մատանի, եւ կօշիկ:

Լաւազոյն պատմութեանը կը ներկայացնէ՝ Աստուծոյ կողմէ մարդուն տրուած փրկութիւնը. մատանին՝ մարդուն տրուած որդեգրութեան եւ այդ որդեգրութեան իշխանութեան պատիւը. իսկ կօշիկը՝ մարդուն տրուած Քրիստոսի փրկութիւնը աւետարանելու պարտականութիւնը:

Եկէք խօսինք այս երեք կէտերուն մասին առանձնաբար.-

1) Հայրը դարձի եկող իր որդիին կը շնորհէ լաւազոյն պատմութեանը, որ նշանակ է փրկութեան: Անոնք որոնք Աստուծոյ կը դառնան, Աստուած փրկութեան պատմութեանով կը ծածկէ անոնց հոգեւոր մերկութիւնը. *«Ճերմակ հագուստներ առ՝ հագնելու համար, որպէսզի մերկութեանդ ամօթը ծածկես»* (Յտ 3.18): Մերկը մեղաւոր մարդն է, իսկ ճերմակ հագուստը՝ կը ներկայացնէ Աստուծոյ Գառնուկին արիւնով ճերմկացուած պատմութեանը: Քննենք մեր անձերը. մե՞րկ են հոգեւորապէս, թէ՛ ծածկուած Աստուծոյ Գառնուկին արիւնով ճերմկացուած պատմութեանով: Ի՞նչ են այն նշանները որոնք կը պարզեն թէ հագած ենք լաւազոյն

պատմուճանը, եւ լաւապէս ծածկուած ենք Աստուծոյ Գառնուկին արիւնով ճերմկցուած պատմուճանով.

Երբ չենք վախնար մահէն, կը նշանակէ թէ զգեցած ենք անմահութեան պատմուճանը:

Երբ մեր հոգին կը զգուի մեղքէն ու անարդարութենէն, կը նշանակէ թէ անիկա ծածկուած է Գառնուկին արիւնով ճերմկցուած պատմուճանով:

Երբ ամէն օր աղօթքով ժամանակ կ'անցնենք Աստուծոյ հետ եւ մեր անցուցած այդ ժամանակը մեր առօրեային ամենէն գեղեցիկ պահը կը նկատենք, կը նշանակէ թէ մեր վրայ առած ենք Աստուծոյ ներկայութեան պատմուճանը:

Երբ կը սիրենք մեզ չսիրողները, կը նշանակէ թէ զգեցած ենք Աստուծոյ սիրոյն պատմուճանը:

Երբ կ'աղօթենք մեզ հալածողներուն փրկութեան համար, կը նշանակէ թէ ծածկուած ենք փրկութեան պատմուճանով:

2) Հայրը մատանի կը պարգեւէ իր որդիին: Մատանին որդեգրութեան եւ այդ որդեգրութեան իշխանութեան խորհրդանիշ է: Աստուծոյ կողմէ որդեգրուիլը՝ Աստուծոյ կողմէ մարդուն տրուած իշխանութիւն է ինքնին (Յհ 1.12): Նայի՛նք մեր ձեռքին. որդեգրութեան եւ այդ որդեգրութեան իշխանութեան մատանին կա՞յ անցուած մեր մատին: Առնենք այս երկու կէտերը առանձնաբար.-

ա) Ըսինք, մատանին խորհրդանիշ է որդեգրութեան: Ունի՞նք որդեգրութեան մատանի մեր մատին: Որդեգրուա՞ծ ենք Աստուծոյ կողմէ: Ի՞նչ են այն նշանները որոնք կը պարգեւն թէ մենք որդեգրուած ենք Աստուծոյ կողմէ.

Եթէ ամէն ինչ Աստուծոյ փառքին համար կ'ընենք եւ մնայուն կերպով կ'երգենք փառքը Աստուծոյ, կը նշանակէ թէ որդեգրուած ենք Աստուծոյ կողմէ:

Եթէ կը սիրենք զԱստուած եւ զինք դարձուցած ենք մեր սիրոյն առարկան ու առանցքը, կը նշանակէ թէ որդեգրուած ենք Աստուծոյ կողմէ:

Եթէ կը խօսինք խաչով իրագործուած Քրիստոսի փրկութեան մասին եւ մարդիկը փրկութեան ճամբուն մէջ տեսնելու վառ փափաք ունինք, կը նշանակէ թէ որդեգրուած ենք Աստուծոյ կողմէ:

Եթէ Աստուծոյ կամքին ու գործին կատարումը մեզի համար առաջնահերթութիւն ու ուրախութիւն է, կը նշանակէ թէ որդեգրուած ենք Աստուծոյ կողմէ:

բ) Մատանին ոչ միայն խորհրդանիշ է որդեգրութեան, այլ նաեւ խորհրդանիշ է այդ որդեգրութեան իշխանութեան: Չշփոթինք. երկու տարբեր բայց զիրար ամբողջացնող բաներու մասին է որ կը խօսիմ. Աստուծոյ զաւակ ըլլալու մասին, եւ իբրեւ Աստուծոյ զաւակ՝ մեր ունեցած իշխանութեան մասին: Առաջինին մասին արդէն խօսեցայ. գանք երկրորդին: Եթէ մենք Քրիստոսի միջոցաւ դարձած ենք Աստուծոյ զաւակներ՝ իբր այդպիսին պէտք է իշխանութիւն ունենանք. իշխանութիւն ի՞նչ բանի վրայ. առաջին հերթին, իշխանութիւն մեղքին վրայ. ունի՞նք իշխանութիւն մեղքին վրայ. մե՞նք է որ կ'իշխենք մեղքին վրայ, թէ՛ մեղքն է որ կ'իշխէ մեր վրայ. մե՞նք է որ ճզմած ենք Սատանային գլուխը, թէ՛ Սատանան ինքն է որ ճզմած է մեր գլուխը. մե՞նք է որ կը տիրենք մեր զգացումներուն վրայ, թէ՛ մեր զգացումները իրենք են որ կը տիրեն մեր վրայ: Եթէ Քրիստոսի միջոցաւ դարձած ենք Աստուծոյ զաւակներ, պէտք է կարենանք իշ-

խանութի՛ն ունենալ եւ իշխե՛լ այս բոլորին վրայ. իսկ եթէ մեղքը ինքն է որ կը տիրէ ու կ'իշխէ մեր վրայ, կը նշանակէ թէ ճշմարտապէս չենք դարձած զաւակներ Աստուծոյ: Աստուծոյ զաւակին չի վայելէր իշխուիլ մեղքին կողմէ, տիրապետուիլ Չարին կողմէ: Միթէ թագաւորի մը զաւակին կը վայելէ՞ գերին դառնալ մեղքին ու մոլութեան: Եթէ երկրաւոր թագաւորի մը զաւակին չի վայելէր գերին դառնալ մեղքին, որքա՛ն աւելի երկնաւոր Թագաւորին զաւակներուն չի վայելէր նման գերութեան մը մեջ գտնուիլը:

3) Կօշիկի տրւչութիւն՝ դարձի եկող որդիին: Կօշիկը՝ նո՛ր կեանքի մը՝ նո՛ր ճամբան կը նշանակէ, եւ այդ ճամբան աւետարանչութեա՛ն ճամբան է, կ'ըսէ Սուրբ Գրիգոր Նարեկացին: Նայի՛նք մեր ոտքերուն, ունի՞նք աւետարանչութեան կօշիկ, այլ խօսքով՝ կ'աւետարանե՞նք Քրիստոսի փրկութիւնը, վկայութիւն կու տա՞նք Քրիստոսի մասին: Ինքզինք Քրիստոսի հետեւորդ նկատող հաւատացեալը, պէտք է աւետարանչութեան կօշիկ ունենայ իր ոտքերուն, այլ խօսքով՝ պէտք է աւետարանէ՛ Քրիստոսը, պատգամէ՛ Քրիստոսի սէրը, տարածէ՛ անոր փրկութիւնը:

Անոնք որոնք կը յայտարարեն թէ իրենք հաւատացեալ են, եւ սակայն չեն տարածեր Քրիստոսի սէրն ու փրկութիւնը, կը նշանակէ թէ աւետարանչութեան կօշիկ չունին իրենց ոտքին, եւ ուստի՝ մերկ են:

Յիշեալ երեք կէտերուն միջեւ յստակ աստիճանաւորում կայ: Աստուած նախ լաւագոյն պատմուճանը (փրկութիւնը) կը շնորհէ: Երկրորդ, մատանի (որդի կոչուելու իշխանութիւն) կը շնորհէ: Եւ երրորդ, կօշիկ (Քրիստոսի փրկութիւնը աւետարանելու պարտականութիւն) կը յանձնէ: Այլ խօսքով, կը փրկէ, կ'որդեգրէ եւ առաքելութիւն կը յանձնէ:

Անառակ որդիին հեռացումն ու վերադարձը իր ազատ կամքով

Կրտսեր որդին իր ազատ կամքով հեռացաւ իր հօրմէն: Կրտսեր որդիին հեռացումը իր հօրմէն ու հօրենական տունէն, կը պարզէ թէ մարդը օժտուած է ազատ կամքի պարզելով Աստուծոյ կողմէ: Ինչպէս Աստուծոյ կողմէ տրուած ռեւէ պարզելի շահագործումը՝ վնաս կը հասցնէ մեզի, նոյնպէս ալ, ազատ կամքի պարզելին շահագործումը կամ չարաշահումը՝ կը վնասէ եւ կրնայ կործանել մեզ: Արդարեւ, ազատ կամքի ազատ օգտագործումը՝ մեզ կործանումի կ'առաջնորդէ:

Կրտսեր որդին իր ազատ կամքով հեռացաւ իր հօրմէն, եւ մեծ դժբախտութիւններու մատնուեցաւ: Հոսկէ կը սորվինք, թէ անոնք որոնք իրենց ազատ կամքով կը հեռանան Աստուծմէ՝ կը դժբախտանան: Օրինակ, ի՞նչ են այն դժբախտութիւնները զորս պատահեցան անառակ որդիին: Ան կորսընցուց իր բոլոր հարստութիւնը, կորսնցուց իր բարեկամները, իր հանգիստը, իր ապահովութիւնը, աղքատացաւ, թշուառացաւ, ուրիշին ձեռքին տակ ծառայ եղաւ, անոր կողմէ խոզանոց դրկուեցաւ, խոզ արածելու սկսաւ, խոզերու կերած եղջիրներէն ուտելու սկսաւ. ո՛չ իրեն գթացող մնաց, ո՛չ խղճացող, ո՛չ օգնող, ո՛չ կերակուր տուող. խոզանոցը իր տունը դարձաւ, խոզարածութիւնը՝ իր գործը, խոզերը՝ իր ընկերները, իսկ խոզերուն կերած եղջիրները՝ իր կերակուրը: Տեսէք, թէ որքա՛ն թշուառին իրավիճակի կը մատնուի մարդը, երբ իր ազատ կամքով կը լքէ իր Արարիչը:

Մենք ի՞նչ կ'ընենք կամ ի՞նչպես կը գործածենք Աստուածատուր մեր ազատ կամքի պարգևը: Շատեր Աստուծոյ կողմէ իրենց տրուած ազատ կամքի պարգևը՝ իրենց իսկ ազատ կամքով կը գործածեն Աստուծոյ դէմ: Ի՞նչ պիտի ընէինք մենք եթէ երբեք մէկու մը պարգև մը տայինք, եւ անիկա մեր տուած պարգևը՝ մեզի դէմ գործածէր: Կամ ի՞նչ պիտի ընէինք եթէ երբեք մէկու մը նուէր մը տայինք, եւ անիկա մեր տուած նուէրով՝ մեզ անարգէր: Այսօր շատեր Աստուծոյ կողմէ իրենց տրուած ազատ կամքի պարգևով՝ զԱստուած կ'անարգեն: Օրինակ, եթէ Աստուած մեր առջեւ դրած է կեանքի ճամբան ու մահուան ճամբան, օրհնութեան ճամբան ու անէծքի ճամբան, եւ պատուիրած է որ ընտրենք կեանքի եւ օրհնութեան ճամբան (Բ.Օրինաց 30.19), մենք զինք անարգած չե՞նք ըլլար եթէ երբեք ընտրենք մահուան ու անէծքի ճամբան: Երբ Աստուած մեր առջեւ դրած է երկու տարբեր ծառեր, մին «բարիի ու չարի գիտութեան ծառ», իսկ միւսը՝ «կենաց Ծառ», եւ պատուիրած է որ չուտենք *բարիի ու չարի գիտութեան ծառէն*, զինք նախատած չե՞նք ըլլար, եթէ երբեք մեր ազատ կամքով ճաշակենք արգիլեալ ծառին պտուղէն, կամ նախընտրենք *բարիի ու չարի գիտութեան ծառը* քան կենաց Ծառը, որ Քրիստոս ինքն է: Երբ կը լքենք մեզ Քրիստոսի արքայութեան առաջնորդող ճամբան եւ մեր ազատ կամքով կ'ընտրենք դժոխք տանող ճամբան՝ անարգած չե՞նք ըլլար զԱստուած, որ աշխարհ եկաւ մեզ ազատելու համար դժոխքէն ու մեղքի անարգանքէն:

Կրտսեր որդիին հայրը կարողութիւնը եւ միաժամանակ իրաւասութիւնը ունէր ստիպելու իր որդիին որ քովը մնար, տունէն չհեռանար. բայց հայրը ազատ կամք տուած էր իր կրտսեր որդիին, որպէսզի անիկա իր ազատ կամքով

ընտրէր քովը մնալ եւ իրեն ծառայել: Սա կը պարզէ, թէ Աստուած ազատ կամք տուած է մեզի, որպէսզի մեր ազատ կամքով ընտրենք հետը մնալ, հետը ապրիլ, հետը գործել, զինք պաշտել, զինք սիրել ու փառաբանել:

Աստուած ամենակարող է, բայց ինքզինք չի պարտադրեր մէկուն: Ան չ'ըստիպէր մարդիկը որ զինք սիրեն ու պաշտեն եւ իրեն ծառայեն: Եթէ սէրը, պաշտամունքն ու ծառայութիւնը ստիպողական ըլլան՝ կը կորսնցնեն իրենց արժէքն ու գեղեցկութիւնը: Աստուած կ'ուզէ որ մարդը իր ազատ կամքով զինք ընտրէ իբրեւ բաժին ու ժառանգութիւն: Կ'ուզէ որ մարդը իր ազատ կամքով ըսէ. «*Ռուն իմ բաժինս ես, ո՛վ Տէր*» (Սղ 119.57): Տէրը կը յայտարարէ թէ ինք մեր սրտին դրան առջեւ կանգնած է ու կը բաղիսէ (Յտ 3.20): Ան կրնայ մեր սրտին դուռը կոտրելով ներս մտնել, բայց չ'ընէր այդպիսի բան: Կը յարզէ մեր ազատ կամքը, եւ կ'ուզէ որ մեր ազատ կամքով՝ մեր սրտի դուռը բանանք իր առջեւ:

2) Կրտսեր որդին ինչպէս իր ազատ կամքով հեռացաւ հորմէն, նոյնպէս ալ իր ազատ կամքով վերադարձաւ իր հօրը: Հայրը չուզէր որ իր որդին լքէր տունը, եւ երբ լքեց՝ չստիպէր անոր որ տուն դառնայ: Հօրը սէրն էր որ որդին տուն առաջնորդէր:

Երբ կը հաստատուի թէ կրտսեր որդին իր ազատ կամքով հեռացաւ հորմէն եւ իր ազատ կամքով վերադարձաւ իր հօրը, հոսկէ կը սորվինք, թէ Աստուած ո՛չ կը ստիպէ որ իրեն մօտիկ մնանք եւ ո՛չ ալ կը ստիպէ որ իրմէ հեռանանք. ո՛չ կը փրկէ մարդը եւ ո՛չ ալ զայն դժոխք կը նետէ իր կամքէն անկախ: Աստուած կ'ուզէ որ մարդը իրեն հանդէպ իր սէրէն մղուած դառնայ իրեն:

Աստուած չ'ըստիպէր որ իրեն մօտիկ ըլլանք, բայց կը փափաքի որ իրեն մօտիկ ըլլանք: Չի՛ պարտադրեր որ իրեն դառնանք, բայց կը հրաւիրէ որ իրեն դառնանք:

Անառակի Կիրակիին առիթով, մենք այսօր հրաւիրուած ենք անառակ որդիին օրինակով՝ մեր ազատ կամքով դառնալու Աստուծոյ եւ ընդունելու անոր փրկութիւնը: Աստուած իր փրկութիւնը շնորհած է մեզի իբրեւ ձրի պարգեւ, բայց այդ պարգեւը մեր սեփականութիւնը չի դառնար՝ եթէ մենք Աստուծոյ չդառնանք: Մէկը կրնայ սեղանին վրայ կերակուր դնել ու պատուիրել մեզի որ մօտենանք եւ ուտենք. այդ կերակուրը սակայն չի կշտացներ մեզ եթէ երբեք չմօտենանք ու չուտենք զանիկա: Նոյնպէս ալ, Քրիստոս իր փրկութիւնը պարգեւած է մեզի, բայց եթէ մենք, մեր սիրտը չբանանք անոր փրկութեան առջեւ՝ ասիկա մեր սեփականութիւնը չի դառնար:

Քրիստոս իր փրկութիւնը կը պարգեւէ, բայց չի պարտադրեր, եւ ճիշդ անոր համար ալ փրկութիւնը կոչուած է՝ պարգեւ: Ան իր ազատ կամքով իր արիւնը թափեց մեր փրկութեան համար. մենք ալ մեր ազատ կամքով պէտք է ընդունինք այդ փրկութիւնը: Օգոստինոս կ'ըսէ. «*Աստուած առանց քու կամքիդ քեզ փրկեց, բայց առանց քու կամքիդ քեզ չի փրկեր*»: Ըսել կ'ուզէ, թէ Աստուած առանց մեր կամքին, այսինքն՝ առանց մեր կամքը հարցնելու՝ մեզ փրկեց, բայց առանց մեր կամքին, այսինքն՝ եթէ մենք չկամենանք մեզ չի փրկեր:

«*Առանց մեր կամքին մեզ փրկեց*», այո՛, որովհետեւ մենք չխնդրեցինք իրմէ որ մարդեղանայ ու աշխարհ գայ, մենք չխնդրեցինք իրմէ որ խաչ բարձրանայ մեր փրկութեան համար: Տէրը իր ազատ կամքով մեզ փրկեց: Տէրը մեր

երկնաւոր Հօր կամքը կատարած ըլլալու համար է որ մեզ փրկեց եւ ո՛չ թէ մեր կամքը: Ի՛նքն իսկ հաստատեց թէ մեր երկնաւոր Հօրը կամքն է որ փրկուինք (Յհ 6.39-40):

«Բայց առանց մեր կամքին՝ մեզ չի փրկեր», որովհետեւ մե՛նք է որ պէտք է կամենանք ընդունիլ Քրիստոսի իրագործած փրկութիւնը մեր սիրտերուն մէջ: Աստուած մեր կամքէն անկախ փրկութիւն պիտի չշնորհէ մեզի: Ճիշդ է որ առանց մեր կամքին իրագործեց մեր փրկութիւնը, բայց առանց մեր կամքին իրագործուած այդ փրկութիւնը, մեր սեփականութիւնը կը դառնայ միայն եթէ կամենանք:

Միրելիներ, ի՞նչ բանն է որ թոյլ չի տար որ դառնանք Աստուծոյ: Աշխարհի հրապո՞յրը. կ'արժե՞ աշխարհի խաբուսիկ հրապոյրներուն համար լքել զԱստուած: Ի՞նչ հրապուրիչ բան կայ աշխարհի մէջ. մե՞ դքք. ի՞նչ հրապուրիչ բան կայ մեղքին մէջ, որ մեզ գեհենի կրակներուն կը տանի: Ինչո՞ւ երկրի համար թողուլ երկինքը: Ինչո՞ւ ժամանակաւոր երջանկութեան համար ուրանալ յաւիտենական երջանկութիւնը: Ինչո՞ւ խոզի կերակուրի համար լքել կենաց Հացը: Ինչո՞ւ երկրային զովացուցիչ նիւթերու համար հեռանալ կենաց Աղբիւրէն: Ինչո՞ւ երկրաւոր դիրքերու համար կորսնցնել երկինքի մէջ մեզի համար պատրաստուած դիրքը: Ինչո՞ւ նիւթական գահերու համար կորսնցնել Քրիստոսի գահակից ըլլալու փառքը: Ինչո՞ւ հրեշտակներուն երգակից ու փառաբանակից ըլլալու համար ստեղծուածներս, մեր ազատ կամքով դժոխքին մէջ չար ոգիներուն դասակից ու տանջակից դառնանք:

Եթէ երբեք կրտսեր որդիին օրինակին հետեւելով մենք հեռացանք Աստուծմէ, եկեք դարձեալ անոր օրինակին հետեւինք ու դառնանք Աստուծոյ: Եթէ անոր նման լքեցինք

մեր երկնաւոր տունը ու մեղքի խոզանոցը գացինք ու հոն գործեցինք, եկէք դարձեալ անոր նման դառնանք մեր երկնաւոր Հօրը տունը եւ հոն գործենք:

Մեր երկնաւոր Հօրը տան մէջ մեր ակնկալածէն աւելի կերակուր կայ, լայն տեղ կայ, սէր ու գորով կայ: Աշխարհը առատ կերակուր կը հրամցնէ բայց չի կրնար կշտացնել. լայն տեղ ունի, բայց չի կրնար մնայուն տեղ պարգեւել. սէր ունի, բայց կեղծ ու խաբուսիկ է: Աստուծոյ քով ամէն ինչ ճշմարիտ է, գեղեցիկ է, յաւիտենական է, փառաւոր ու սքանչելի է:

Թող որ Աստուծոյ սէրը ի՛նք մեզի դարձնէ իրեն: